

ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE **أزதாக** جريدة يومية سياسية وأدبية - المبرة للحولة، إيا آدروشيان

1500 L.Ո. 76րդ ՏԱՐԻ, ԹԻԻ 67 (21410) ՇԱԲԱԹ, 31 ՄԱՅԻՍ 2003 10 ԷՁ

Ս. ՓԵՔԵՐԱՍՊՈՐԿԻ ՄԷՋ

ՆԱԽԱԳԱՀՆԵՐ ՔՈՉԱՐԵԱՆ - ՇԵՒԱՐՏՆԱԾԷ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեան եւ վրաստանի նախագահ Լուիսարո Շեւարտնաձէ Ս. Փեքերասպորկի մէջ երէկ ունեցան հանդիպում մը: Կողմերը քննարկեցին շրջանաձիւ հարցեր եւ երկուստեք հետաքրքրութիւն ներկայացնող խնդիրներ:

Ս. Փեքերասպորկի մէջ նաեւ տեղի ունեցաւ ԱՊՀի անդամ երկիրներու դեկլարանտներու ոչ պաշտօնական հանդիպումը: Հանդիպումին բացումը կատարելով, Ռուսիոյ նախագահ վասիլի Փութին նշեց, որ պիտի քննարկուին ԱՊՀի գործունէութեան մէջ առաջնահերթ նկատուող եւ միջազգային իրավիճակին վերաբերող հարցեր: Հանդիպումին ընթացքին ներկայացուցան հայաստանի նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւններուն ընթացքին ԱՊՀի դիտորդական առաքելութեան պեկուցումները:

ՇԱՐՈՆ - ԱՊՊԱՍ «ԴՐԱԿԱՆ» ՀԱՆԴԻՊՈՒՄԻՆ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

ԻՍՐԱՅԷԼ ՊԻՏԻ ՍԿՍԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ ԴՆԵԼ ՊԱՂԵՍՏԻՆՅԻՆԵՐՈՒՆ ՀԵՏ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ ՄԸ

Շարոն - Ապպաս «դրական» հանդիպումին լոյսին տակ, Իսրայէլ երէկ յայտարարեց, որ պիտի սկսի գործադրութեան դնել պաղեստինցիներուն հետ խաղաղութեան ծրագիր մը, որ կը վայելէ միջազգային խաղաղութեան քառեակին հովանաւորութիւնն ու պօրակցութիւնը: Իսրայէլի հաւանութիւնը սակայն յաւելեալ ճնշում կը բանեցնէ պաղեստինցի վարչապետ Մահմուտ Ապպասի վրայ, որմէ կը պահանջուի կասեցնել Իսրայէլի դէմ յարձակումներն ու անձնասպանական գործողութիւնները:

ԱՊՊԱՍ - ՇԱՐՈՆ ԸՆԴՈՒՄՈՒՄ

Պաղեստինցի եւ Իսրայէլացի վարչապետներուն միջեւ պաշտօնական երկրորդ հանդիպումը տեղի ունեցաւ Հինգշաբթի երեկոյեան, Երուսաղէմի մէջ: Հանդիպումին աւարտին, Իսրայէլացի ու պաղեստինցի պաշտօնատարներ ըսին, որ տեսակցութիւնը բաւական զբաւական էր եւ թէ երկու կողմերը պատրաստ են գործադրութեան դնելու խաղաղութեան ճամբու քարտէսը:

Պաղեստինցի բարձրաստիճան պաշտօնատար Նապիլ Ապու Ռուտայնա ըսաւ, որ հանդիպումը նախապատրաստական քայլ մըն է Աքապայի վեհաժողովին, որ պիտի կայանայ յառաջիկայ շաբթուան մէջ: Եռակողմանի վեհաժողովին պիտի մասնակցին Շարոն, Ապպաս եւ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Գոր: Ապու Ռուտայնա աւելցուց, որ երկու կողմերը համաձայնեցան յառաջացնել միացեալ յանձնախումբ մը, որ պիտի շարունակէ խաղաղութեան քարտէսը քննարկելու աշխատանքը:

ՊԱՂԵՍՏԻՆՅԻՆԵՐՈՒՆ ԴԵՄ ՊԱՏԺԱՍԻՋՈՑՆԵՐՈՒ ՄԵՂԱՍՏՈՒՄ

Ապպաս - Շարոն հանդիպումը պատճառ դարձաւ նաեւ, որ Իսրայէլ երէկ յայտարարեց միջոցառումներ, որոնք կը մեղմացնեն պաղեստինցիներուն դէմ հաստատուած պատժամիջոցները:

Շարոնի գրասենեակին կողմէ հրապարակուած յայտարարութիւնը կը նշէր, որ որդեգրուելիք միջոցառումներուն կարգին է դէպի Իսրայէլ մուտքի ու ելքի պատուութիւնը, քանի մը բանտարկեալներու ազատ արձակումը, ինչպէս նաեւ պաղեստինեան իշխանութեան վճարուելիք տուրքերու յանձնումը:

Յիշեալ որոշումներուն լոյսին տակ, մտատրուապէս 25 հազար պաղեստինցի գործաւորներ վերստին արտօնութիւն պիտի ունենան Իսրայէլ մտնելու (15 հազար Կապայէն, 10 հազար Այսրյորդանանէն): Պաղեստինցի բարձրաստիճան պաշտօնատարներ ալ դարձեալ առիթ պիտի ունենան մասնաւոր արտօնագիրներ ունենալու՝ պիտուրական անցարգելներէ անցնելու համար: Իսկ տուրքերու վճարումը ամսական 30 միլիոն տուարի պիտի բարձրանայ:

Իսրայէլ համաձայնած է նաեւ Կապայի եւ Այսրյորդանանի մէջ ապահովութիւնը յանձնել պաղեստինցիներուն՝ հանգրուանային կերպով իր ուժերը հեռացնելէ ետք: Շարոն սակայն այս բոլորին փոխարէն Ապպասէն պահանջած է միջոցառումներ որդեգրել՝ անդամալուծելու համար ահաբեկչական կազմակերպութիւնները, որոնք Իսրայէլի դէմ յարձակումներ կը գործեն: Շարոն կը պահանջէ նաեւ բռնագրաւել անոնց պէնքերը եւ արգիլել Իսրայէլի դէմ յարձակումներ հրահրող երեւոյթները: Շարոն կը սպառնայ անմիջապէս հակադարձել եւ Իսրայէլեան ուժերը կրկին պաղեստինեան շրջաններ ներխուժել, եթէ պաղեստինցիները չկիրարկեն իրենց պահանջումները:

Շար.՝ էջ 10

ՊՈՒՐԾ ՀԱՍՈՒՏԻ «ՅԱԿՈՒՔ ՏԵՐ ՄԵԼՔՈՆԵԱՆ» ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

ԱՐԺԱՆԱԻՈՐԱՊԵՍ ՆՇՈՒԵՑԱԻ ԸԱՅԱՍՏԱՆԻ Ա. ԸԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԸԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 85ԱՄԵԱԿԸ

Հայաստանի Ա. Հանրապետութեան 85ամեակին առիթով, երէկ երեկոյեան ժամը 8:00ին, Պուրճ Համուտի «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ տեղի ունեցաւ ոգեկոչման ձեռնարկ մը, որուն ներկայ գտնուեցան Լիբանանի Հայոց Թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեան, Հայ կաթողիկէ պատրիարքական ընդհանուր փոխանորդ Վարդան եպս. Ազգարեան, ՄԱԿՍ-ԵՄի կեդրոնական մարմինի առեւտրայէտ վեր. Փօլ Հայտնութեանի ներկայացուցիչ՝ վեր. Սողոմոն Քիլաղպեան, Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեան, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարգարեան, իբրանահայ ազգային կառոյցներու եւ միութիւններու ներկայացուցիչներ եւ ազգայիններ:

Յետ Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներու յոտնկայս ունկնդրութեան, բացման խօսքով հանդէս եկաւ ընկ. Յակոբ Հանտեան, որ անդրադարձաւ 85 տարի առաջ վեց դարերու ստրկութենէն ետք հայ ժողովուրդի ազատատենչ պայքարներուն պայքարին ու անով պատկանած յաղթանակին՝ Մայիս 28ի անկախութեան: «Մայիս 28ը լոկ պատմութեան կամ դէպքերու շարք մը չէ, այլ՝ ոգեկոչ թուական մըն է կամքեր պրկող եւ ուժերը մէկտեղող, որ եկաւ պատկառելի յաղթանակը այնքան երկար ու դժուարին պայքարին եւ յուսադրելու ամբողջ ժողովուրդը», ըսաւ ան եւ



ASHNAG

աւելցուց. «Կարելի չէ լուսապէս ըմբռնել եւ ամբողջական ձեռով հասկնալ 21 Սեպտեմբեր 1991ի Հայաստանի վերանկախացումը՝ Վրաստանց Մայիս 28ին, որուն ոգիով այսօր համայն հայութիւնը կը շարունակէ անրապնդել հաւաքական ինքնութեան գաղափարը»:

Ապա խօսք առաւ հանդիսութեան առաջին բանախօս՝ Վարդան եպս. Ազգարեան: Ան ըսաւ. «Անկախութիւնը յաղթանակ կ'ենթադրէ, իսկ յաղթանակը՝ պատերազմ: Պատերազմը ոճիր է, երբ կ'օգտագործուի մարդոց փառասիրութիւնը տարածելու եւ փոքր ազգեր ճնշելու համար, սակայն նուիրակաւ է, երբ կը մղուի սեփական իրաւունքի պաշտպանութեան համար՝ ունենալու ազատութիւն անկախ հայրենիք մը»: Բանախօսը աւելց

ուց, որ 85 տարի առաջ Սարդարապատի սկսած պայքարը կը շարունակուի նաեւ այսօր, աշխարհին ընդունուած հայրենիքը կը շարունակուի իր զարգացումը: Վարդան եպս. Ազգարեան շեշտեց, որ Մայիս 28ի ձեռքբերման յաղթանակը կը պատրոշուի մեր պատմութեան այլ պատերազմներէն, որովհետեւ անիկ յստացումն է մեր պատմութեան վերջին դարերուն ընթացքին մղուած բազմաթիւ ճակատամարտերուն եւ որմէ ծնունդ առաւ մեր պատու անկախ հայրենիքը: Իր խօսքին աւարտին, Վարդան եպս. Ազգարեան եզրակացուց, որ բոլոր ուժերէն աւելի պօրաւոր միութեան ուժն է, որուն շնորհիւ է, որ մեր հայրենիքը պօրաւոր կը մնայ ու անոր երկինքին վրայ միշտ

կը ծածանի հայրենի երազները:

Հանդիսութեան երկրորդ բանախօսն էր ընկ. Շահան Գաւտահարեան, որ Մայիս 28ի խորհուրդին լոյսին տակ արժեւորեց Հայաստանի պետականութեան, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան եւ սփիւռքահայութեան քաղաքական մտածողութեան իրագործած յաջողութիւնները, յատկապէս վերջին տասնամեակին ընթացքին: Ան շեշտեց, որ այսօրուան անկախ Հայաստանի փաստացի շարունակութիւնն է Արամ Մանուկեաններու կերտած Հայաստանին եւ ըսաւ, որ Հայաստանի Ա. Հանրապետութեան 85ամեակը կը համընկնի հայ ժողովուրդին երկրորդ Սարդարապատին՝ Արցախեան ազատամարտի 15ամեակին:

Շար.՝ էջ 10

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԱԶՏԱԿ

30 ՄԱՅՈՒ 2003

«Ազգակ»-ի ցրուիչներուն եւ գրախանութներուն մօտ կարելի է գտնել Հայաստանի անկախութեան 85ամեակին նուիրուած յատուկ թիւը:

60 էջ: Սակ՝ 3000 L. ո.

ԻՐԱՔԻ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄ ՅԱՅՏԱՐԱՐԱԾ ԴԱՇՆԱԿԻՑ ՈՒԺԵՐԸ ԱՅՍ ԱՆԳԱՄ ԻՐԵՆՑ ԱԶՔԵՐԸ ԿԸ ՅԱՌԵՆ ԴԵՊՈՒՐԸ

Իրաքի դէմ պատերազմ յայտարարած դաշնակից ուժերու ռատիոկայանէն: Յայդաշնակից ուժերու մը ժամ առաջ, Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնըլոս Ռամսֆելտ ամբաստանած էր Թեհրանի իշխանութիւնները, դիտել տալով, որ անոնք ուժ կ'ունենան Իրաք խռովութիւններ ստեղծելու: Պաղտատի ռատիոկայանը թէեւ ուղղակի

իրանը չնշեց, սակայն յստակ էր, որ ակնարկութիւնը անոր ուղղուած էր: Ռատիոկայանէն հրապարակուած յայտարարութիւնը կոչ կ'ուղղէր իրաքցիներուն՝ գործակցելու դաշնակից ուժերուն հետ՝ երաշխաւորելու համար իրենց ընտանիքներուն եւ հայրենիքին ապագան:

Առաջին յայտարարութենէն քանի մը վայրկեան ետք Իրաքի յայտարարութիւնը կը տեղեկացնէր, թէ անցնող քանի մը օրերուն ընթացքին, դաշնակից ուժերը քանի մը գործողութիւններու ձեռնարկած են Կիւեյի խմբակներու դէմ, որոնք մնացորդներն են Սատտամ Հիւսէյնի տապալած վարչակարգին:

Մինչ այդ, կարգն ու կանոնը տակաւին չէ վերահաստատուած յատկապէս՝ մայրաքաղաք Պաղտատի մէջ, ուր Սատտամի իշխանութեան տապալումէն ետք շաբաթ ետք, կողոպուտն ու ոճիրները կը շարունակուին, հակառակ պահանջներուն ընդդէմ: Պաղտատի մէջ զոյրութիւն ունին հաւաքական քանդումի պէնքեր: Ան ըսաւ, որ Իրաքի մէջ գտնուած են պէնքերու պատրաստութեան գործարաններ եւ գիտելիքատանցներ, որոնք դատաւարտուած ու արգիլուած են ՄԱԿի կողմէն: Սպիտակ Տան բանքեր Արի Ֆլայշըր իր կարգին ըսաւ, որ նախագահը գոհ է ու բաւարարուած է գաղտնի սպասարկութեան տրամադրած

Շար.՝ էջ 10

Aunty Rosa
Café Restaurant

ԸՆԾԱՆԵԱՅՈՒ ՅՈՒՅԻ ՄԵՆՈՒՅՐ

Dbayeh - Lebanon - Al Saoud Street, Tel.: 04/544122 - 03/333776 - 03/860186

ԻՐԱՆԻ ՄԵՋ

ՆԱԽԱՐԱՐ ՕՊԷՅՏ ՏԵՍԱԿՑԵՑԱԻ ՆԱԽԱԳԱՀ ԽԱԹԵՄԻ ՀԵՏ

Արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Ժան Օպէյտ երէկ շարունակեց Իրան իր այցելութիւնը եւ ընդունեցաւ Իրանի նախագահ Մոհամէտ խարեմիի կողմէ: Քննարկուեցան նախագահ խարեմիի Լիբանան կատարած այցելութեան արդիւնքները, ինչպէս նաեւ իսլամական երկիրներու խորհրդրդածողովին արծարծուած կարգ մը հարցեր:

Օպէյտ հանդիպում մը ունեցաւ նաեւ իրանցի իր պաշտօնակիցին՝ Քամալ խարապիի հետ: Քննարկուեցին առարկայ դարձան շրջանային իրադարձութիւններն ու անոնց արձանագրած պարզացումները:

Խարապիի հետ Լիբանանի, Սուրիոյ եւ Իրանի դէմ ամերիկեան սպառնալիքներուն շուրջ քննարկումներուն մասին հարցումի մը պատասխանելով Օպէյտ ըսաւ, որ իրանցի իր պաշտօնակիցին հետ քննարկած է շրջանը յուզող բոլոր հարցերը:

Օպէյտ անլցուց, որ սպառնալիքները իրաւունքները չեն վտանգէր եւ անդրադառնալով Միջին Արեւելքի մէջ խաղաղութեան գործընթացի ներկայ տարբերակին՝ խաղաղութեան ճամբու քարտէսին, ան ըսաւ, որ քարտէսին գործադրութիւնը խոչընդոտող միակ կողմը Իսրայէլն է:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԿՈՉ ԿՈՒՂՂԷ ԼՈՒՐՋԻ ԱՌՆԵԼ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ

Պաշտօնական աղբիւրներ երէկ յայտնեցին, որ նախագահ Կոչ. Էմիլ Լահուտ կոչ ուղղած է շրջանային ներկայ պայմանները եւ սպառնալիքները կարեւոր նկատելի ու հոգ տանելի քաղաքացիներուն ապահովութեան եւ տնտեսական փճակին:

Նախագահ Լահուտ անդրադառնալով նախագահական ընտրութիւններուն շուրջ տիրող ներլիբանանեան բանավեճերուն ընդօժեց, որ անհրաժեշտ է վերջ տալ նման բանավեճերուն, որովհետեւ տակաւին մէկուկէս տարուան ժամանակ կայ նախագահական ընտրութիւններուն եւ անոնցմով զբաղիլը դուռ կը բանայ տարբեր եւ բազմաթիւ քաղաքական բանավեճերու եւ բաժանումներու:

Նախագահ Լահուտ դիտել տուած է նաեւ, որ նախագահական ընտրութիւններուն մասին շրջան ընող յուրերը կը նպատակադրեն վնաս հասցնել նախագահին եւ նախագահութեան:

18 ՏԱՐԻ ԵՏՔ

ՔԱՅՈՒՄ՝ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՇԻՊԱՏՈՍԱՐԱՆԻՆ

Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Վինսընթ Պէթըլ եւ քննկրէսական Տարիլ Իսա երէկ Աուքարի ամերիկեան դեսպանատան կից բացումը կատարեցին 18 տարիներէ ի վեր չգործող հիւպատոսարանին: Հանդիսութեան ներկայ գտնուեցան նախարարներ Նեժիպ Միքաթի եւ Ալի Հիւսէյն Ապտալլա, ընդհանուր դատախաչ Ատնան Ատտոււմ, ընդհանուր ապահովութեան ընդհանուր տնօրէն Կոր. Ժամիլ Սայիիտ եւ պետական ու բարձրաստիճան պաշտօնատարներ:

Պէթըլ իր խօսքին մէջ շեշտեց, որ լիբանանեամերիկեան երկկողմանի յարաբերութիւնները պէտք ունին յարատեւ պահպանութեան:

Պէթըլ նկատել տուաւ, որ 2003ը պատմական փոփոխութեան թուական է Միջին Արեւելքի համար, որովհետեւ ամերիկեան եւ բրիտանական դաշնակից ուժերը կրցան Իրաքի նախագահ Սատտամ Հիւսէյնի վարչակարգը տապալել:

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԿԸ ՔՆՆԱՐԿԷ ԼԻԲԱՆԱՆԻ ՉՈՒՐԻ ԿԱՐԻՔԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ Քորալթթէմի մէջ գումարեց ժողով մը, որուն ընթացքին Միջազգային Գրամատան տարբեր պաշտօնատարներու, ինչպէս նաեւ լիբանանցի պետական պաշտօնատարներու հետ քննարկեց յաւելեալ շուրի Լիբանանի կարիքը:

Ժողովին ներկայ գտնուեցան Միջազգային Գրամատան շուրի հարցերու յատուկ բաժանմունքի տնօրէն Ժամալ Սադիր, Միջին Արեւելքի մէջ դրամատան տնօրէնուհի Ֆրանսուազ Տիքթթ, Լիբանանի մէջ դրամատան տնօրէն Օմար Ռապպը, Էլեւուտքի նախարար Ֆուատ Սիւնիորա, ու ժամիւրի եւ շուրի հարցերու նախարար Այյուպ Հըմայէտ, ապա պետականացման գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար Ղապի Եուսէֆ եւ վարչապետ Հարիրի խորհրդական Ֆատի Ֆուայ:

Հանդիպումին, վարչապետ Հարիրի ըսաւ, որ լիբանանցիներու մեծ տոկոս մը կայ այլ երկիրներու մէջ, շրջանային ընդհանուր կացութեան իբրեւ հետեւանք: Ան ըսաւ, որ Պրապիլի մէջ կ'ապրին արեւելի քան 6 միլիոն լիբանանցիներ, Արժանթինի մէջ՝ 2 միլիոն լիբանանցիներ, ինչպէս նաեւ բազմաթիւ ուրիշներ՝ այլ երկիրներու մէջ: «Հաւանական է, որ անոնք օր մը որոշեն վերադառնալ Լիբանան եւ բնակութիւն վերահաստատել. ուրեմն հարկ է Լիբանանի շուրի կարիքը նկատի առնել, ապագան ի մտի ունենալով», անլցուց ան:

Վարչապետ Հարիրի ընդունեց նաեւ Լիբանանի մէջ Ռուսիոյ դեսպան Պորիս Պոլոթինը, որուն հետ քննարկեց շրջանային եւ միջազգային վարչապետ Հարիրիի այցելումներէն էին նաեւ նախարարներ Ֆուատ Սիւնիորա եւ Էլիաս Սքաֆ, որոնք վարչապետին հետ արծարծեցին իրենց նախարարութիւններուն կապուած հարցեր:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ նախարար Մահմուտ Համմուտ երէկ ընդունեց Լիբանանի մէջ Ռուսիոյ դեսպան Պորիս Պոլոթինը եւ դեսպանատան մէջ զինուորական նոր կցորդը:

Հանդիպումին, քննարկումի առարկայ դարձան Լիբանանի հետ Ռուսիոյ գործակցութիւնը ակնհայտօրէն աշխատանքներու ծիրէն ներս:

Քննարկուեցան նաեւ խաղաղութեան ճամբու քարտէսը եւ անոր հանդէպ Ռուսիոյ կեցուածքը, ինչպէս նաեւ Ռուսիոյ եւ Միացեալ Նահանգներու նախագահներ Վլադիմիր Փութինի եւ Ճորձ Պուշինի միջեւ հանդիպման մանրամասնութիւնները:

ԿԵՆՍՈՒՈՐՏԻ նախարար Ֆարէս Պուէյյու երէկ այցելեց խմբագիրներու սենտիքայի կեդրոնատեղին, ուր հանդիպում մը ունեցաւ սենտիքայի նախագահ Մըլիհէմ Քարամի եւ սենտիքայի անդամներուն հետ: Քննարկուեցան տեղական եւ շրջանային հարցեր:

Պուէյյու դիտել տուաւ, որ ներկայ կառավարութիւնը արտակարգ կառավարութեան կազմ մըն է, որ պարտաւորուած է լուծել երկրին դիմագրաւած հարցերը:

ՄՇԱԿՈՅԹԻ նախարար Ղապի Արիտի երէկ ընդունեց Մէնուական Արաբիոյ մշակոյթի նախարարութեան խորհրդատու յանձնախումբը, որուն մաս կը կազմէին նախարարութեան ընդհանուր քարտուղար Մոհամէտ Ռիտա Նասրալլա, ինչպէս նաեւ այլ պաշտօնատարներ:

Հանդիպումին, քննարկուեցան Պէյրութ - Ռիտա երկկողմանի յարաբերութիւնները, յատկապէս մշակոյթի մարպի վերաբերեալ:

Արիտի դրուատեց Լիբանանի եւ Մէնուական Արաբիոյ միջեւ եղբայրական յարաբերութիւնները եւ շեշտեց մշակոյթի մարպը բարգաւաճեցնելու նպատակով փոխ գործակցութեան կարելորութիւնը:

ԱԶԳԱՅԻՆ ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՔՈՒԼԵՃԻ ԱՇԿԱԿԵՐՏԵՐԸ
Ձեզ կը հրաւիրեն այցելելու իրենց գծագրութիւններուն եւ ձեռնային աշխատանքներուն
ՅՈՒՅԱՇԱՆԴԵԱՆ
որ տեղի պիտի ունենայ 2Էմ 6 Յունիս 2003ին ՍԻՐԱՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ համոզարարանին մէջ:
● Ցուցահանդէսը բաց է ժամը 10:00Էմ 14:30:

«ԼՈՒՍԱՍՈՒՏ»Ը՝ ԺԱՄԸ 7:30ԻՆ
Հայ Կաթողիկէ պատրիարքարանի «Լուսամուտ» ծրագիրը կը սփռուի ամէն Գործըջաբթի օր, երեկոյեան ժամը 7:30Ին, «Թելէ Լիմիտ» կայանէն:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
2003 թուականը Ազգային վարժարաններու տարի հռչակող Ազգային Իշխանութեանց որոշումին կը շարունակեն ընդառաջել հայ վարժարանի անփոխարինելիութեան հաւատարմող նոր գաղափարապաշտները: Հայ վարժարանին սերնդակերտ դերին եւ պատմական նշանակութեան խորապէս գիտակից բարերարներու շնորհիւ վրայ, Կի Մամուկեանէն ետք, վերջերս անլցան լիբանանահայ երկու այլ արուեստագետներ՝ Չաքար Բէշիշեան եւ Սարո Եսայեան:
Ուրախ ենք յայտարարելու, որ հայ վարժարանի, այս պարագային՝ Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան երկրորդական քուլթի հայատրոպի միջավայրին մէջ հասակ նետած խմբավար եւ երաժիշտ Չաքար Բէշիշեան եւ դաշնակահարուհի Սարո Եսայեան, հաւատարիմ՝ իրենց ստացած հայեցի դաստիարակութեան, Երեքշաբթի, 27 Մայիսին, «Սոնո» սրահին մէջ կայացած իրենց Ունակահանդէսին հասոյթը ամբողջութեամբ նուիրեցին լիբանանահայ Ազգ. վարժարաններուն:
Ճնորհակալութիւն՝ Չաքար Բէշիշեանին եւ Սարո Եսայեանին:
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՔԱՆՏԱՌՈՒԹՅՈՒՆ
Տեր եւ տիկին Ալլեք եւ Զալին (ծնեալ՝ Վանլեան) Եաւերեան բախտաւորուած են աղջիկ գաւակով մը 27 Մայիս 2003

ԿՈՒՂՈՒԻՆ
● Ոսկերիչ (սետեքր) վարպետներ: Դիմել՝ հեռ. 01-242549:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ԵՐԳԱՇԱՆԴԵԱՆ
Կատարողութեամբ՝ հայրենի երգչուհիներ **ԶԱՐՈՒԿԻ ՊԱՊԱՅԵԱՆԻ ՎԱՐՉՈՒԿԻ ՎԱՐՉԱՆԵԱՆԻ**
Գործըջաբթի, 4 Յունիս 2003, երեկոյեան ժամը 8:30Ին, «Յակոբ Տեր Մելքոնեան» թատերասրահին մէջ:
ՄԱԿ՝ 15,000 եւ 10,000 Լ. Ո.
● Տոմսերը կը վաճառուին՝ Համազգայինի գրախանութ, «Շաղոյեան» կեդրոն՝ Պուրճ Համուտ, «Տիքթթ Ժեքա»՝ Պուրճ Համուտ, «ՕԵԼԻՒՄ» գրախանութ՝ Անթիլիաս եւ Համազգայինի «Լ. Շանթ» կեդրոն:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԺԸՆԵԻ ՄԵՋ ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԴԻՒԱՆԻ ՆԻՍՏԵՐՈՒՆ

Վերջին քանի մը օրերուն, Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Կաթողիկոս Ժընեի մէջ նախագահեց Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Դիւանի նիստերուն: Խորհուրդի ընդհ. քարտուղար դոկտ. Քոնրատ Ռայլըր ներկայացուց իր վերջին 3 ամիսներու տեղեկագիրը: Այս Խորհուրդի վանական բաժանմունքներու տնօրէնները ներկայացուցին իրենց տեղեկագիրները, որոնք քննարկուեցան դիւանին կողմէ:

Ժողովական նիստերու ընթացքին օրակարգի նիւթ դարձաւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի տնտեսական կացութիւնը, տիրող ներկայ միջազգային տնտեսական դժուարութիւններուն լոյսին տակ:

Ներկայացուեցաւ նաեւ միջազգային հարցերու տեղեկագիրը եւ յատուկ քննարկումի նիւթ դարձաւ յետ պատերազմեան Իրաքի կացութիւնը: Նշենք, որ Իրաքեան պատերազմի օրերուն Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը մարդասիրական լայն օժանդակութիւն կատարած էր իրաքցի ժողովուրդին: Միջազգային հարցերու քննարկման ծիրէն ներս ներկայացուեցան նաեւ պաղեստինեւիսրայէլեան, Քոնկոյի, Սուտանի եւ Կիպրոսի քաղաքական հարցերը, որոնց մօտէն կը հետեւի Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը՝ յատուկ բաժանմունքներով:

Ժողովական նիստերու ընթացքին քննարկուած կարեւոր հարցերէն մէկը եղաւ նաեւ յաջորդ Համաժողովի նախապատրաստական աշխատանքը: Յայտնենք, որ յաջորդ Համաժողովը պիտի գումարուի 2006ի Փետրուարին, Փորթո Ալլեկընի մէջ, Պրապիլ: Օրակարգի հարցերու վրայ էին նաեւ յառաջիկայ Օգոստոսին գումարուելիք Կեդրոնական եւ Գործադիր վարչութեանց ժողովներուն օրակարգերը, Վատիկանի հետ շարունակուող գործակցութեան առնչուող հարցեր, ինչպէս նաեւ խորհուրդին վարչական, ծրագրային ու յարաբերական աշխատանքներուն առնչուած շարք մը հարցեր:

ՔՈՆԿՐԵՍԱԿԱՆ ԻՍԱ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ



Լիբանան գտնուող Միացեալ Նահանգներու Քննկրէսի անդամ Տարիլ Իսա երէկ հանդիպում ունեցաւ խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորիի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի հետ:

Հանդիպումներուն ընթացքին քննարկուեցան Միջին Արեւելքի պարզացումները, խաղաղութեան ճամբու քարտէսի գործադրութեան կարեւորութիւնը եւ անոնց հանդէպ Լիբանանի ու Մ. Նահանգներու որդեգրած կեցուածքները, ինչպէս նաեւ Պէյրութ - Ուաշինկթըն երկկողմանի յարաբերութիւնները:

Իսա այցելեց Քորալթթէմ, ուր վարչապետ Հարիրիի հետ քննարկեց խաղաղութեան ճամբու քարտէսին առնչուող հարցեր: Վարչապետ Հարիրի ըսաւ, որ Լիբանան կը պօրակցի այս քարտէսին գործադրութեան համար ի գործ դրուող ջանքերուն:

Մասլէհի մէջ Պրորի ընդունեց Իսան, որուն հետ քննարկեց Ուաշինկթընի շուրերուն հարցը: Պրորի շեշտեց, որ Լիբանան կը մերժէ պաղեստինցի գաղթականներու բնակեցումը եւ կը պահանջէ անոնց տունդարձը, ինչպէս նաեւ Կոլաւն Սուրիոյ յանձնելու հրամայականը եւ 4 Յունիս 1967ի սահմանագիծին յարգումը:

Հանդիպումներէն ետք Իսա յայտնեց, որ Պրորիի եւ Հարիրիի հետ քննարկումները ընթացած են դրական մթնոլորտի մէջ: Իսայի կ'ընկերակցէր Լիբանանի մէջ Մ. Նահանգներու դեսպան Վինսընթ Պէթըլը:

«ՊԶՏԻԿ - ՄԶՏԻԿ»Ի ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՄՐՑՈՒՄ «ԵԿԵՔ ՇԱՐԱԳՐԵՆՔ»
ԿԻՐԱԿԻ, 1 ՅՈՒՆԻՍԻ ԱՌԱԻՕՏԵԱՆ ԺԱՄԸ 10:00ԻՆ, «ՅԱԿՈՒ ՏԷՐ ՄԵԼՔՈՆԵԱՆ» ԹԱՏԵՐԱՍՐԱՀԻՆ ՄԷՋ:

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ


ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ՎԻՏԵՕ ԽԱՂԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ ՄԵՌՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ ՊԱՅՔԱՐ



Վերջին տարիներուն վիտէօ խաղերու ճարտարարուեստը հսկայական յեղաշրջումներու ենթարկուած է: 10 միլիառ տոյար արժողութեամբ այս ճարտարարուեստին արգասիքը հանդիսացող վիտէօ խաղեր աւելի «իրական» են քան երբեք, եւ տրուած ըլլալով որ այս խաղերուն հերոսներուն շարժումները մարդկային շարժումներու ուղղակի կապուած են, մարդկային շարք մը երեւոյթներ, որոնց կարգին՝ սեռերու միջեւ պայքարը, սոցիոսկալած է այս խաղերէն ներս:

Սոցիալական գիտնականները ամօրհանները, գերարդիական գէնքերով օժտուած «անական» հերոսները, քանդող եւ փշոզող տղամարդիկը: Ելեկտրոնային խաղերու աշխարհը հետզհետէ աւելի կը հարստանայ իրական սեռը ներկայացնող հերոսներով, որոնք նոյն-քան հզօր են, որքան իրենց «տղամարդ» գործակիցները:

Այսպէս, օրինակ, Լարա Քրոֆթ, Ինտիման ծնողին իրական տարբերակը, այնքան մեծ յաջողութիւն գտաւ իրեն վիտէօ խաղ, որ շուտով վերածուեցաւ նաեւ Ֆիլմի Անթիլիանա Ժոյի դերակատարութեամբ: Ֆիլմին յաջողութիւնը, իր կարգին, խթան հանդիսացաւ երկրորդ րափին մը պատրաստութեան:

Սակայն, իր օրերուն, Լարա Քրոֆթի տիպարը բացառութիւն կը կազմէր, վիտէօ խաղերու աշխարհին մէջ, ուր կը տիրապետէին արական սեռի ներկայացուցիչները: Այսօր իրավիճակը տարբեր է: «Մայքրոսոֆթ» ընկերութեան վերջերս հրատարակած «Թաօ Ֆէնկ Զիսթ ԱՖ Տը Լոթը» խաղին հերոսուհին Եւալի սեռը ներկայացնող հերոսուհիներէն մէկն է միայն:

Բազմաթիւ այլ խաղեր սկսած են ընդգրկել կիներ իրեն հերոսուհի:

Ֆեմինիստ գրող ձեռնարկը Պոմպոնա զոհուած կուլթիւն կը զգայ երբ կը տեսնէ վիտէօ խաղեր, ուր իրական սեռի ներկայացուցիչներ կը ճակատին «Թշնամիներու» դէմ: Նման հերոսուհիներ կրնան փոփոխութեան ենթարկել ժողովուրդներու մէջ տարածուած գտած այն համոզումը, թէ կիները կրաւորական անձեր են եւ յաճախ կը գտնուին գոհի դիրքին մէջ, կը բացատրէ «Մանիֆէսթ»-ը: Երկրորդ կիներ, Ֆեմինիզմը եւ ապագան» (2000) գիրքին հեղինակը՝ 32ամեայ Պոմպոնա:

«Մայքրոսոֆթ» ընկերութեան ելեկտրոնային խաղերու արտադրութեան պատասխանատուն դիտել կու տայ, որ այս տարուան ընթացքին հրատարակուած վիտէօ խաղերու կարեւոր մէկ մասը կ'ընդգրկէր հերոսուհիներ, գոյր խաղի սիրահարները «կը յարգեն»: «Երբ խաղի մը հետ 40 ժամ կ'անցընես, պէտք է որ հերոսը սիրես», կը բացատրէ ան:

Սակայն իրական սեռի բոլոր ներկայացուցիչները չէ որ գոհ են պարզուած կացութենէն: Կարգ մը ֆեմինիստներ կ'առարկեն, թէ նման խաղեր կրնան միաժամանակ քաջայերեւ կանանց դէմ վայրագութիւնը:

Յամենայնդէպս, վիտէօ խաղերու աշխարհին մէջ եւս, կնոջ իրաւունքներու համար պայքարը սուր կերպով կը շարունակուի, յատկապէս երբ գոյութիւն ունին «Կրանտ Թէֆթ Օթթ»-ը: Վայս Սիթի»-ի նման վիտէօ խաղեր (որմէ, ի դէպ, ցարդ վաճառուած է 8,5 միլիոն օրինակ), ուր խաղացողը կէտեր կը շահի կիներ ծեծելուն եւ սպաննելուն համար: Մեծի ընթացքին յաճախ կ'օգտագործուին բուռնացք, կիցը եւ... կոֆի դաւազաններ:

www.hamazkayin.com

ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՄԸ ԸՆՍԱԶԱՅՆ

ՎԻՏԵՕ ԽԱՂԵՐԸ ԱՅԴՔԱՆ ԱԼ ԱՆՕԳՈՒՏ ՉԵՆ

Երկար ժամեր համակարգիչին առջեւ գամ-լած՝ վիտէօ խաղերու աշխարհին մէջ ընկողմանի կարողութիւններով կ'օժտեն ենթական: Այս առարկութիւնը նոյնպէս փորձարկութեան ենթարկուած մը արդիւնքները ցոյց կու տան, թէ «Էքշըն» վիտէօ-խաղերը, ինչպէս օրինակ «Կրանտ Թէֆթ Օթթ 3» եւ «Քրանտ Թէֆթ Սթրայք», գիրքերը ըմբռնանողներուն «միտքերը կը սրեն»:

Արդարեւ, Ռոչեսթըր համալսարանի գիտաշխատողներու կատարած ուսումնասիրութիւնը պարզած է, թէ տեւաբար ինքնաշարժներու մրցումի եւ պատերազմի թեմաներով ելեկտրոնային խաղեր խաղացողներու մօտ տեսողական կարողութիւնները աւելի զարգացած են քան նման խաղեր չկիրարկողներու մօտ: Այսպէս, օրինակ, տեսողական յարափոփոխ տեղեկութիւններ աւելի դիւրութեամբ վերծանուած են ուսումնասիրութեան մասնակցող ելեկտրոնային խաղերու սիրահարներու կողմէ:

Կարելի է առարկել, թէ տեսողական կարողութիւններով օժտուած մարդիկն է, որ աւելի հակուած

ունին ելեկտրոնային խաղերու սիրահար դառնալու, եւ ոչ թէ ելեկտրոնային խաղերն են, որ այս կարողութիւններով կ'օժտեն ենթական: Այս առարկութիւնը նոյնպէս փորձարկութեան ենթարկուած է Ռոչեսթըրի գիտաշխատողներուն կողմէ: Այսպէս, անոնք ցոյց տուին, թէ մարդիկ, որոնք սովորաբար վիտէօ-խաղեր չեն խաղար, եթէ մարզուին այդ խաղերու քեքսիքներով եւ սկսին զանոնք կիրարկել, անոնց տեսողութեան կարողութիւնները կը բարելաւուին:


«Նէյշըր»-ի մէջ Հինգ-շարթի, 29 Մայիսին լոյս ընծայուած այս ուսումնասիրութիւնը, սակայն, չի բացայայտեր, թէ նման խաղեր ինչո՞ւ այս դրական ազդեցութիւնը ունին մարդոց տեսողական կարողութիւններուն վրայ: Սակայն գիտաշխատողները կ'առաջարկեն, հիմնուելով իրենց բացայայտումներուն վրայ, վիտէօ խաղեր օգտագործելը բանակայիններու ճակատամարտի յատուկ մարզումներուն ընթացքին, ինչպէս նաեւ տեսողութեան զօրացումի ծրարներէ տառապողներու հետ:

Միւս կողմէ, սակայն, ուսումնասիրութիւններ ցոյց կու տան, թէ ելեկտրոնային խաղեր վայրագութիւն կը սերմանեն անհասկանալի մօտ: Հակավայրագութիւն արքիվիստներ այս թէզը այնքան մը յառաջ տարած են, որ անոնք վիտէօ խաղերու ձգած ազդեցութեան կը վերագրեն, օրինակ, Քոլումբիայի Հայ Սթուլի մէջ 1999ին տեղի ունեցած սպանութիւնները:

Այս նոր ուսումնասիրութիւնը չէ արծարծած վիտէօ խաղերու վայրագութիւն սերմանելու տեսութիւնը: Այլ ուսումնասիրութիւններ ցոյց տուած են, թէ վիտէօ խաղերու սիրահար գիտնականներ աւելի լաւ կերպով կը վարեն օդանաւեր եւ շատ աւելի դիւրութեամբ կը վերծանեն իրենց դիմացի պատուին վրայ յայտնուող տեղեկութիւնները:

Բարձրաստիճան գիտնական մը կը բացատրէ «Բանակին մէջ վիտէօ խաղերու մեծ սիրահարներ կան: Իրենց ամբողջ կեանքին ընթացքին վիտէօ խաղեր խաղացողներ շատ աւելի հանդիստ կը թուին ըլլալ այսպիսի միջավայրերու մէջ»:

ԱՐՇԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԺՊԻՏ



«ԱԶԴԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ
Բոլոր անոնք, որոնք կը փափաքեն «Ազգակ»-ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, Մինչեւ երեկոյան 5:00:
ՄԱՀԱԶԴԱՆԵՐԸ բացառութիւն են: Մահազ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

«ՍՈՆԻ» ՀՐԱՊԱՐԱԿԵՑ «ՓԻ. ԷՍ. ԷՔՍ.»Ը



Ոչ այդքան հասութեամբ եռամսեակներ բոլորելէ ետք, վերջերս ելեկտրոնային սարքերու արտադրութեան «Սոնի» ընկերութիւնը իր արտադրութիւններուն վաճառքի գիները նուազեցնելու եւ նորանոր սարքեր հրատարակելու հրամայականին առջեւ կը գտնուէր: Ընկերութիւնը այս մարտահրաւէրին ընդառաջեց յարձակողական ռազմավարութեամբ մը եւ Չորեքշաբթի, 28 Մայիսին, հրատարակ իջեցուց «Փի. Էս. Էքս.» ելեկտրոնային խաղերու սարքը, որ միաժամանակ կ'ընդգրկէ «Տի. Վի. Տի. Ռիբորտը», «Թի. Վի. Թիւնըր» եւ ելեկտրոնային խաղերու սարք մը:

Առտնին ելեկտրոնային սարքեր արտադրող աշխարհի մեծագոյն ընկերութիւնը հանդիսացող «Սոնի» իր այս ռազմավարութեամբ կը փորձէ մեծ յաջողութիւն արձանագրած «Փլէյսթէյշըն 2» սարքը համարել այլ սարքերու հետ, որպէսզի նոր թափ տայ այդ սարքերու վաճառքին:

Սակայն երկու շարժումն մէջ ելեկտրոնային խաղերու երկու նոր սարքեր հրատարակած «Սոնի» կը մերժէ յայտարարութիւններ կատարել «Փլէյսթէյշըն 3»-ի հրատարակումի թուականին մասին: Կ'ակնկալուի, որ «Փլէյսթէյշըն»-ի նորագոյն տարբերակի հրատարակումը կ'ընդգրկէ բարդ հաշիւներ կը կատարէ ճշգրիտ համար «Փլէյսթէյշըն 3»-ը հանրութեան տրամադրութեան տակ դնելու յարմարագոյն ժամանակը: Մէկ կողմէ ան կ'ուզէ առաւելագոյն շահը ապահովել «Փլէյսթէյշըն» սարքին, սակայն միւս կողմէ ան կ'ուզէ պահել ելեկտրոնային խաղերու «Քոնսոլ»ներու աշխարհին մէջ իր առաջին դիրքը, որ որեւէ պահու կրնայ վտանգուիլ «Մայքրոսոֆթ» ընկերութեան «էքս Պոքս»-ին կողմէ:

Պատրաստեց՝ ԽԱԶԻԿ ՍՈՒՐԱՏԵԱՆ

www.aztagdaily.com

ԱՅԿԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

ՑՈՒՑԱՍՐԱՄԱՆՆԵՐ «ԱՐԻՆ» ՍԵՆՏԵՐ
ԳՐԱՍԵՆՆԵԱԿ ԱՅՇԻԼ, ԱՅՇԻՏ ԶԵՆՔ, Բ. ՅԱՐԿ
ԳՅՈ. (01) 242556/7

NO MATTER WHAT YOU NEED...
... OR WHERE YOU NEED.

Մանկապատանեկան



ՓՐԿԵՆՔ ԱՄԱՉՈՆԸ

(Բ. ՄԱՍ)

Ամէն տարի Ամազոնի անտառէն 170 հազար քառ. քիլոմետր կ'անհետանայ:

Անձրեւներու եղանակին անտառը հսկայական սպունգի մը կը վերածուի եւ կը ծծէ աւելորդ ջուրը: Հետեւաբար, երբ անտառը կ'անհետանայ, հողը պաշտպանուած չ'ըլլար. արեւադարձային անձրեւներ իրենց հետ կը տանին հողը, եւ արեւը զայն կ'այրէ: Այս աղքատացած հողին վրայ խոտերը կամաց-կամաց պիտի զրաւեն շքեղ անտառին տեղը:

եւ համերաշխ, բնութեան մէջ: Սակայն տակաւին մինչեւ օրս մօտաւորապէս յիսուն հողամասեր տակաւին չեն սահմանազատուած: Կարգ մը ընկերակցութիւններու օգնութեամբ, տենի հնդիկները վերջապէս որոշում տուած են անձամբ ճշդել այդ սահմանները՝ պաշտպանելու համար տակաւին մարդկային ոտք չտեսած անտառին տարածքները:



Անտառին բոլոր գանձերը կ'օգտագործուին. կտրուած ծառերուն կէսը կը ծառայէ փայտի կամ թուղթի պատրաստութեան, իսկ մնացեալ բաժինը կը փճացուի՝ տեղը տալու համար մշակելու արտերու, արօտավայրերու, ճամբաներու կամ հանքերու: Ընտիր փայտի փնտռուէր պատճառ կը դառնայ նոր ճամբաներու շինութեան եւ ամէն քայլի, անտառը քիչ մը աւելի կ'անհետանայ...

1985 թուականին, Պրագիլի կառավարութիւնը որոշած է իւրաքանչիւր ցեախումբի հողամասը ճշդել, որպէսզի անոնք կարենան ապրիլ խաղաղ

առանց հրամանի: Ամէնէն շատ փնտռուած փայտերը հագուազիտ կիզակներ են, որոնք ամբողջովին անհետացած են կամ վտանգուած են:

Արեւադարձային փայտը անտառին միակ գանձը չէ: Անոր ենթահողը կը պարունակէ հանքային արժէքաւոր միւլթեր, ինչպէս՝ ոսկի, աղամանդ կամ ալիւմինիում:


Եթէ ծառահատումը նոյն կշռոյթով շարունակուի, 50 տարի ետք Ամազոնէն ոչ մէկ հետք պիտի մնայ:

Արեւադարձային անտառները կը կազմեն մոլորակին միայն 7 առ հարիւրը: Սակայն Ամազոնի անտառը կը պարունակէ...

- 60 հազար բոյսի տեսակներ
- 800 ծառի տեսակներ, որոնց 180ը՝ արմաւենիի տեսակներ
- 3000 ձուկի տեսակներ՝ 500ը կատու - ձուկի տեսակներ
- 1300 բուսական տեսակներ
- 350 ստնաւորներու տեսակներ
- 140 օձի տեսակներ
- 2,5 միլիոն միջատներու տեսակներ
- Վերջապէս, գիտէ՞ք, թէ ծառի մը վրայ կարելի է գտնել մըրջինի մինչեւ 43 տեսակ:

ԳԻՏԵՊՐ, ԹԷ...

• Կտրուած ծառերուն 80 առ հարիւրը ապօրինի է. անոնք կը կտրուին



խարհի մէջ, ծխախոտին պատճառով: Առողջապահութեան Միջազգային կազմակերպութեան 192 անդամ երկիրները կը միանան պայքար մղելու համար ծխախոտին դէմ: Անոնք ծխախոտին դէմ միջազգային համաձայնագիր մը կնքած են: Որպէսզի այս որոշումը գործադրուի, պէտք է առնուազն 40 կառավարութիւնները գայն ստորագրեն:

Ամէն տարի 5 միլիոն մարդ կը մահանայ աշ-

արգիւում է նաեւ պատրաստել եւ ծախել պոն-պոններ, խաղալիքներ, որոնք գլանիկ կերպարանք կ'ունենան: Ասիկա միջոց մըն է նաեւ օգնելու աղքատ երկիրներուն: Օրինակի համար, Նամիպիոյ (Ափրիկէ) մէջ մեծ թիւով մարդիկ զժուարու-թիւն ունին իրենց սնունդը ապահովելու: Հակառակ ստոր, բնակչութեան կէսէն աւելին իր դրամէն մաս մը կը յատկացնէ ծխախոտին...

Ս. ՓԵԹԵՐՍՊՈՒՐԿ 300 ՏԱՐԵԿԱՆ Է

16 Մայիս 1703ին Պետրոս Ե Պօղոս ամբողջին առաջին քարը կը գետեղուէր: Ներկայիս, ան Լոնտոնի չափ մեծ քաղաք մըն է:

Արուեստի եւ մշակոյթի քաղաք Ս. Փեթերսպուրկ կը սօսնէ իր 300ամեակը: Ան երիտասարդ քաղաք մըն է՝ բաղադրուած Հռոմի նման քաղաքի մը, որ հիմնուած է Ք. Ա. 753 թուականին:

ՎԵՐԱԳԱՆՈՒՄԻՆ ԱՆՑԵԱԼԻՆ

Ռուսիոյ կայսրը՝ Պետրոս Ա. կամ Մեծն Պետրոս կ'որոշէ «դէպի Եւրոպա պատուհան մը բանայ»: Ֆինլանտայի ծոցին, Նեւայի գետաբերանին ամբողջովին նոր քաղաք մը կը ծնի: Ան պէտք է ծառայէ ճամբայ բանալու Պալմիր ծովուն վրայ եւ պաշտպանուելու շուէտացիներէն: Նոյն ժամանակ ան ցուցանիչ է հմայքի:

Չայն կառուցելու եւ բարեգործելու համար Մեծն Պետրոս արուեստագէտներ բերել կու տայ ամբողջ Եւրոպայէն: 1712ին Ս. Փեթերսպուրկ կը դառնայ Ռուսիոյ նոր մայրաքաղաքը: Երբ Պետրոս Ա. կը մեռնի, քաղաքը ունէր 75 հազար բնակիչ, որուն մեծ մասը բռնի պահուած էին: Հարիւր յիսուն հազար բանուորներ կը մահանան այս աշխատանքներուն ընթացքին:


Քաղաքը շինուած է ճահիճներու վրայ: Հետեւաբար, ամրան մեծերը քաղաքը «կը նուաճեն», իսկ ձմեռնային սառույցով կը ծածկուի ամբողջ հինգ ամիսներ: Ռուսիոյ պոլշեիկեան յեղափոխութենէն ետք, 1918ին, Ս. Փեթերսպուրկ կը վերածուի համաշխարհային քաղաքի մը: Օրինակի համար, էրմիթաժ թանգարանը կը ցուցադրէ 3 միլիոն արժէքաւոր գործեր: Եթէ իւրաքանչիւր գործի առջեւ մէկ վայրկեան կենանք, ուր տարի պէտք պիտի ունենանք բոլոր ցուցադրուած իրերը տեսնելու համար...

Ս. ՓԵԹԵՐՍՊՈՒՐԿ, ԹԷ ՓԵԹՐՈՎԿՐԱՏ


Այս քաղաքը ունի... երեք անուն: Մեծն Պետրոս իր քաղաքը անուանած է Ս. Փեթերսպուրկ: 1914ին անոր տրուած է աւելի ռուսական անուն մը՝ Փեթրոկրատ: Իսկ 1924ին, Լենինի մահէն ետք, Ստալին գայն կ'անուանափոխէ Լենինկրատի:

Վերջապէս, 1991ին, հանրաքուէ է մը ետք, անոր բնակիչները կ'որոշեն քաղաքը վերամկրտել իր բուն անունով՝ Ս. Փեթերսպուրկ:

Ժ Ա Մ Ա Ն Ց



Կրնա՞ս գտնել այս մարդիկին եւ անոր ցուցումին միջեւ գոյութիւն ունեցող 10 տարբերութիւնները:




Խաղցողը ո՞ր գունդին պէտք է զարնէ՝ 3 գնդակ նոյն ծակին մէջ մտցնելու համար: Գոյութիւն ունին բազմաթիւ լուծումներ:

ԵԿԵՔ ԾԱՐԱԴՐՆԵՐ

Կը սիրես պատմութիւններ հնարել, երեւակայութիւնդ աշխատցնել, շարադրել...

Մ ա ս ն ա կ ց է՝ «Պատկեր-Սպտիկ»ի շարադրութեան մրցումին:



- Մրցումին կրնան մասնակցիլ 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանի աշակերտներ:
- Մրցումը տեղի պիտի ունենայ կիրակի, 1 Յունիսին, «3. Տեր Մելքոնեան» թատերասրահին մէջ, առաւօտեան ժամը 10:00-12:30:
- Քոյր մասնակցողները պէտք է թատերասրահ գտնուին ժամը 9:30ին:
- Մասնակցողները պէտք է իրենց հետ ունենան իրենց գրեական պիտոյքները:
- Իւրաքանչիւր մակարդակի առաջին, երկրորդ եւ երրորդ հանդիպանողները պիտի ստանան արժէքաւոր նուէրներ:
- Արդիւնները պիտի յայտարարուին «Պատկեր-Սպտիկ»ի Ուրբաթ 20 Յունիսի թիւով:

ՎԵՐԱՍՈՒՏ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ

ԵՂԻՃԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԼԵՒՈՆ ԵՒ ՄՈՏԻԱ ՅԱԿՈՐԵԱՆ ՍՈՒՐԵՆ ԽԱՆԱՄԻՐԵԱՆ ՅԱՌԱՋ - Գ. ԿԻՒՊԵՆԿԵԱՆ ՆՈՒՄԱՐԵԱՆ - ԽՐԻՄԵԱՆ Ս. ԲԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԱԶՍՈՐ ԳԱՍԱՐՃԵԱՆ ԱՐԳԱՐԵԱՆ ՈՒՌԻՆԵԱՆ L.A.T.C.

2003 - 2004 ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՉԱՆԻ

Կիբանանի Ազգային վարժարաններու 2003 - 2004 կրթական տարեշրջանի արձանագրութիւնները արդէն սկսած են եւ պիտի շարունակուին մինչեւ 25 Յունիս 2003:

Ծնողներէն կը խնդրուի ներկայանալ վարժարանի տնօրէնութեան եւ արձանագրել իրենց գաւակները՝ ճշդուած ժամանակամիջոցի ընթացքին:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ


ԱՌԱՆՑ ԾԽԱԽՈՏԻ ԱՇԽԱՐՀ ՄԸ

Այսօր Առանց ծխախոտի միջազգային օրն է: Ասիկա առիթ մըն է յիշեցնելու, թէ ծխախոտը վտանգաւոր է նաեւ չծխողներուն համար, որովհետեւ կրնայ հիւանդութիւններ պատճառել չծխողներուն մօտ, որոնք ամբողջ օրուան ընթացքին ակամայ կը շնչեն այդ թունաւոր ծուխը:

Այս պատճառով աշխարհի երկիրները ստորագրած են համաձայնագիր մը՝ պայքարելու համար ծխախոտին դէմ: Այս ձեւով մինչեւ 2030 թուական տարեկան աւելի քան 10 միլիոն կեանքեր փրկուած պիտի ըլլան:

ՄԱԿԻ Առողջապահութեան Միջազգային կազմակերպութեան 192 անդամ երկիրները կը միանան պայքար մղելու համար ծխախոտին դէմ: Անոնք ծխախոտին դէմ միջազգային համաձայնագիր մը կնքած են: Որպէսզի այս որոշումը գործադրուի, պէտք է առնուազն 40 կառավարութիւնները գայն ստորագրեն:


Ամէն տարի 5 միլիոն մարդ կը մահանայ աշ-



Այս խաղը կրնա խաղալ ընկերոջ մը հետ: Իւրաքանչիւրը իր կարգին գառը կը նետէ եւ իր քարը կը յառաջացնէ: Ուշադրութիւն. երբ սեւ տուփիկի մը վրայ իյնաք, կարգերնոր կը կորսնցնէք:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն ԱՇԽԱՐՀ



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Լիբանանի ֆուտբոլի Ա. դասակարգի ախոյեանության 2002-2003 եղանակի 22րդ եւ վերջին հանգրուանի մրցումները, որոնք թէև տեղի կ'ունենան այս շաբաթավերջին, սակայն ախոյեանությունը ցարդ չէ ամարած, նկատի ունենալով, որ առաջին չորս դիրքերը գրաւողները եւ վերջին չորս դիրքերը գրաւողները տակաւին մրցումներ ունին կատարելիք:

Այդ նոր դրույթները պիտի կիրարկուի հետեւեալ ձեւով.

22րդ հանգրուանի մրցումներէն ետք, անոնց այդ ունեցած կէտերուն վրայ կ'աւելնան այդ վերջին մրցումներէն հաւաքած կէտերը, որմէ ետք կը յստականայ ախոյեանը եւ Բ. դասակարգ փոխադրուող երկու խումբերը: Հակառակ այս նոր դրույթեան սակայն (Սկզբնական ֆուտբոլի ախոյեանության նման), վերջին չորս դիրքերը գրաւող խումբերը իրենց կէտերուն գումարը բարձրացնելով վերջնական դասաւորման մէջ 9րդ դիրքէն աւելի վեր չեն կրնար բարձրանալ, նկատի ունենալով որ 5էն 8րդ դիրքերը գրաւող խումբերուն կէտերը կը մնան նոյնը, թէև անոնց մրցումներ պիտի չկատարեն:

Նշենք, թէ առաջին չորս դիրքերը գրաւող խումբերուն անունները արդէն իսկ յստակացած են: Անոնք են. Օլիմպիք, Ախտ, Նրժմէ եւ Անսար:

Շաբաթակիցքին իր գումարած ծողովին, ֆեւրեարսին անդրադառնալով 2003-2004 եղանակի ախոյեանության մրցումներուն (Ա. եւ Բ. դասակարգ) օտարականներու հարցին, պահեց նոյն դրույթները: Այսինքն, Ա. դասակարգին մաս կազմող խումբերը իրաւունք ունին միայն երկու օտարական դաշտ ներկայացնել, իսկ Բ. դասակարգի խումբերը՝ միայն մէկ օտարական:

Ստորեւ՝ 22րդ եւ վերջին հանգրուանի մրցումներուն յայտագիրը (բոլոր մրցումներն այլ տեղի պիտի ունենան միեւնոյն ժամուն՝ ժամը 4:45ին).

ՀԱՐԱԹ, 31 ՄԱՅԻՍ

ԴՊՇՏ

Պրժժ - Մապարրա	Փունիէ
Շապապ Սահէլ - Սաֆա	Պ. Համուտ
Սալամ - Ախա Ալէյ	Թրիփոլի
ԿԻՐԱԿԻ, 1 ՅՈՒՆԻՍ	
Նրժմէ - Ախտ	Մ. Աւան
Սաժէս - Օլիմպիք	Պ. Համուտ
Թատամոն-Արար - Անսար	Սուր
ՆՇԵՆՔ, թէ ընդհանուր դասաւորումը այժմ	

կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԵՏ
1.- Օլիմպիք	15	3	3	37	12	47
2.- Նրժմէ	13	5	3	41	21	43
3.- Ախտ	13	4	4	35	17	42
4.- Անսար	9	9	3	31	18	36
5.- Թ. Սուր	8	7	6	29	26	31
6.- Սաֆա	7	6	8	25	28	27
7.- Սաժէս	5	8	8	25	30	23
8.- Շապ. Սահէլ	4	8	9	26	34	20
9.- Սալամ	5	5	11	27	36	20
10.- Մապարրա	4	8	9	22	34	20
11.- Ախա Ալէյ	4	4	13	16	36	16
12.- Պրժժ	5	2	14	21	43	11

ՆՇԵՆՔ, թէ 21րդ հանգրուանէն յետաձգուած մրցումին, Նրժմէ 4-2 արդիւնքով պարտութեան մատնեց Սաժէսը:

Ա. ՍԷ. ՄԻԼԱՆ ԱԶՔԵՐԸ ԿԸ ՅԱՌԷ ԻՏԱԼԻՈՅ ԲԱԺԱԿԻՆ



Քարյո ԱԶՔԵՐԸ (ձախճի) եւ Փաւլօ Մալտինի՝ Սիլանօ քաղաքի Մալտինի օղակայանը ժամանելէ ետք

«Չէմփիրը կ'իկ» ի բաժակին տիրացած Ա. ՍԷ. Միլան այժմ իր աչքերը յառած է Իտալիոյ ֆուտբոլի բաժակին: Աւարտականի երթ մրցումին 4-1 արդիւնքով պարտութեան մատնած Ա. Էս. Ռո-ման (այս վերջինին դաշտին վրայ), Ա. ՍԷ. Միլան այսօր իր դաշտին «Սան Սիբո» մէջ պիտի հիւրընկալէ չոռն քաղաքի խումբը:


Կ'ակնկալուի, որ այսօրուան մրցումին Ա. ՍԷ. Միլանի մարզիչ Քարյօ Անչետթի իր կազմէն ներս կատարել շարք մը փոփոխութիւններ: Օրինակի համար պրայմիցի բերդապահ Տիտա, որ անցեալ Չորեքշաբթի օր Եւրօպէոյի դէմ տեղի ունեցած մրցումին զսպեց երեք փենալթի, իր դիրքը պիտի վերջի Բրիտիսիան Ապիտի: Յառաջապահ գիծին վրայ՝ Մատրիլի Շեվչենքօ իր կողքին պիտի ունենայ Ռիվալտոն, որ անցեալ Չորեքշաբթի օր դաշտ չէր ներկայացած:

Արդէն իսկ յառաջիկայ եղանակին Ես. Է. Էֆ. Ա.ի ֆուտբոլի մրցաշարքին իր տոմսը ապահոված Ա. Էս. Ռոման, ոչ մէկ ճիգ պիտի խնայէ տիրուպիսի տիրանալու համար: Մարզիչ Ֆապիօ Քապիլլոն իր կազմը դաշտ պիտի ներկայանայ բաւական զօրաւոր խումբով մը: Միակ բացական պիտի ըլլայ Վինչենչօ Մոնթելա (վիրաւոր):

ՖՈՐՄԻԻԼԱ 1

ՎԱՂԸ՝ ՄՈՆԱԲՈՅԻ ԿՐԱՆ ՓՐԻՆ

Ֆորմիլա 1ի 2003ի աշխարհի ախոյեանութեան 7րդ կրան փրին տեղի պիտի ունենայ վաղը՝ կիրակի, Մոնաքոյի մէջ: Մոնթէ Բարլոյի այս կրան փրին, որ կը նկատուի 16 կրան փրիններէն ամենէն դժուարը, թերեւս անգամուան մը համար այդքան այլ հետաքրքրական չթուի, մանաւանդ անոր ֆուտբոլային համար, նկատի ունենալով որ Ֆրանսայի ֆուտբոլի ֆետերասիոնին որոշումով, խումբը Ա. դասակարգէն կը փոխադրուի Բ. դասակարգ:



Մոնթէ Բարլոյի վազքուղի

Մոնաքոյի իշխան՝ Ալպէր սակայն կը խոստանայ իր ամէն կարելին ընել խումբը Ա. դասակարգ պահելու:

78 լէփնոց այս կրան փրին, որուն երկարութիւնն է 263 քմ., պիտի ըլլայ բաւական դժուար, նկատի ունենալով որ միջտ ալ առաջին դիրքին վրայ գտնուող վարորդին գերազանցելը դժուար է, նեղ ճամբաներուն պատճառով:

Երէկուան պաշտօնական փորձերուն ընթացքին Ֆեռարիի երկու վարորդները՝ գերմանացի Միքայէլ Շումսխըրը եւ պրայմիցի Ռուպէնս Պարիքէլլօ յաջողաբար գրաւեցին առաջին եւ երկրորդ դիրքերը:

Սակայն վստահաբար այդ պաշտօնական փորձերը այդքան այլ կարելի չեն նկատուիր, քան՝ այսօրուան փոյ-փոպիլընի մրցումները:

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ՍՓԸՐԶ - ՆԷԹՑ՝ ԱԻԱՐՏԱԿԱՆ

Արեւմտեան շրջանէն ներս տեղի ունեցող ԷՆ. ՊԻ. Էյ.ի աւարտական մրցումին վեցերորդ ճակատումին, Սան Անթոնիօ Սփըրզ 90-78 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Տալաս Մալքրիքը, հասաւ աւարտական մրցումին, 4-2 արդիւնքով յառաջանալէ ետք անոր վրայ: Անիկա, աւարտականին իր դէմ պիտի ունենայ Արեւելեան շրջանի ախոյեան՝ Նիւ Ճըրպի՝ Նէթըր:

Ստորեւ՝ անոնց միջեւ տեղի ունենալիք եօթ մրցումներուն յայտագիրը (սկիզբը նշուած խումբը, իր դաշտին վրայ կը կատարէ մրցումը).

ՀԻՆԳՇԱՐԹԻ, 5 ՅՈՒՆԻՍ	Սան Անթոնիօ Սփըրզ - Նիւ Ճըրպի Նէթը
ՇԱՐԱԹ, 7 ՅՈՒՆԻՍ	Սան Անթոնիօ Սփըրզ - Նիւ Ճըրպի Նէթը
ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 9 ՅՈՒՆԻՍ	Նիւ Ճըրպի Նէթը - Սան Անթոնիօ Սփըրզ
ՀԻՆԳՇԱՐԹԻ, 12 ՅՈՒՆԻՍ	Նիւ Ճըրպի Նէթը - Սան Անթոնիօ Սփըրզ
ՇԱՐԱԹ, 14 ՅՈՒՆԻՍ	Նիւ Ճըրպի Նէթը - Սան Անթոնիօ Սփըրզ
ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 16 ՅՈՒՆԻՍ	Սան Անթոնիօ Սփըրզ - Նիւ Ճըրպի Նէթը
ՀԻՆԳՇԱՐԹԻ, 19 ՅՈՒՆԻՍ	Սան Անթոնիօ Սփըրզ - Նիւ Ճըրպի Նէթը

ժԻՐՕ

**ՍԻՍՈՆԻ
ԿՊԻՂՂՈՒԻ
ԴԷՊԻ
ՏԻՏՂՈՍ**

Իրաւիցի հեծելարշաւի շրջավազքին (ժիբօ) 19րդ հանգրուանի մրցումը, որ լեռնային վերջին հանգրուանն էր, փեղի ունեցաւ Քանելիէն Քասթարա Տէլ Թոքէ (239 քմ.) վերջ գրաւ իրաւիցի ձիադէրձ Սիմոնիի (Սայթօ) յաղթանակով, որ արձանագրեց վեց ժամ 20 վայրկեան եւ 5 երկվայրկեան արդիւնք մը:

31 փարեկան Սիմոնի, որ կը շահէր այս շրջավազքին իր երրորդ փիլոզօսը, հեծելանորդներու ընդհանուր դասաւորման մէջ աւելիով ամբողջող իր դիրքը (85 ժամ 44' 39"), երբ այժմ 8' 04" առաւելութիւն մը ունեցաւ Յրոյ դիրքը գրաւող իր ազգակիցին Շթէֆանօ Կարծելլիի վրայ:

Այսօր փեղի կ'ունենայ 20րդ եւ նախա վերջին հանգրուանի մրցումը, Քանոպիոյն Քանթու (133 քմ.) իսկ վաղը 21րդ եւ վերջին հանգրուանի մրցումը՝ Ենթուրալոյն Միլանօ (33 քմ.), որ տիպի ըլլալով ժամացոյցի դէմ մրցում մը:

Փ. Ս. Ժ. - ՕՔՍԷՆ ԱԻԱՐՏԱԿԱՆ ՏԱՔ ԾԱԿԱՏՈՒՄ



Լուիս Ֆերնանտէզ

Ֆրանսայի ֆուտբոլի բաժակի մրցաշարքին աւարտականին, այսօր «Սթատ Տը Ֆրանս» դաշտին վրայ տեղի պիտի ունենայ բաւական հետաքրքրական եւ տաք ճակատում մը՝ Փարիզ Սէն ժերմէնի եւ Օքսէնի միջեւ: Անոնց երկուքին համար այս մրցումը շահիլը կը նկատուի առաջնահերթ քայլ մը, նախ 2002-2003 եղանակը փրկած ըլլալու համար, իսկ երկրորդ՝ յառաջիկայ եղանակին Ես. Է. Էֆ. Ա.ի ֆուտբոլի մրցաշարքին մասնակցելու համար: Օքսէն ախոյեանութիւնը աւարտեց 6րդ դիրքին վրայ, մինչ Փարիզ Սէն ժերմէնը՝ 11րդ դիրքին վրայ:

Փարիզ Սէն ժերմէնի մարզիչ՝ Լուիս Ֆերնանտէզ այսօր իր վերջին մրցումը պիտի կատարէ մայրաքաղաքի կազմին հետ, մինչ Օքսէնի մարզիչ Կի Ռու, իր ապագային գծով ցարդ ոչինչ կը յայտարարէ: Ֆերնանտէզի կազմին դաշտ պիտի չկարենան ներկայանալ սակայն, բերդապահ Լիոնէլ Լեթիպի եւ արժանիքիցի յառաջապահ Մարթին Քարտէթի: Կի Ռուի խումբին մաս կազմող երեք մարզիկներ՝ ձիպրիլ Սիւէ, Օլիվիէ Քաֆօ եւ Ֆիլիպ Մէքսէս վստահաբար բոլորէն աւելի պիտի ուզեն այս տիրուպիսի տիրանալ, որովհետեւ անոնք երեքը ցարդ չեն յաղթած իրենց ակումբին հետ բաժակ մը բարձրացնել:

ԹԵՆԻՍ. ՌՈՒՆԱՆ ԿԱՐՈՍ

ԱԿԱՍԻ ԱՆՑԱԻ Գ. ՀԱՆԳՐՈՒԱՆ



Անտրէ Ակասի (աջից) եւ Ջաիէ Մալիսէ

Ֆրանսայի մէջ տեղի ունեցող Ռոլան Կարոսի կրան շրջան մրցաշարքի Գ. հանգրուանի երէկուան մրցումներուն, թիւ 2 դասուած ամերիկացի Անտրէ Ակասի 6-4, 7-5 եւ 7-5 արդիւնքով պարտութեան մատնեց պելճիքացի իր մրցակիցը՝ Ջաիէ Մալիսէ (դասուած՝ 26րդ):

Իր կարգին 11րդ դասուած գերմանացի Ռայնըր Շուրլըր ապահովեց յաջորդ հանգրուանին իր տոմսը, 6-3, 1-6, 7-6 եւ 2-3 արդիւնքով պարտութեան մատնելով 22րդ դասուած հարաւային ամերիկացի Ռեյնի Ֆերէյրան, որ մրցումը կիսատ ձգեց:

Աղջկանց Գ. հանգրուանի մրցումներուն, թիւ 1 դասուած ամերիկացի Սերենա Ուիլիքսն անխնայ եղաւ աւստրիացի իր մրցակիցին՝ Պարպարա Շթի հանդէպ, արձանագրելով՝ 6-0 եւ 6-0 յաղթանակ մը:

4րդ դասուած պելճիքացի ձաքիս շենին - Հարտէն իր կարգին յաղթանակ մը արձանագրեց 6-1 եւ 6-1 արդիւնքով պարտութեան մատնելով Տէլի Ռէտրիանթեֆին (Մաուակասթար): Ճափոնցի Այի Սուկիամա (դասուած՝ 16րդ) յաջողեցաւ 6-1 եւ 6-4 արդիւնքով պարտութեան մատնել ամերիկացի Մեկիան Շոկնեսիս (դասուած՝ 18րդ):

ՊԱՅԵՐՆ ՄԻՆԻԻՆ ԱՅՍՕՐ ՊԵՏԻ ՓՈՐՉԷ ՏՈՒՊԼԷ ՄԸ ԻՐԱԳՈՐԾԵԼ



Միքայէլ Պալաք՝ Պունտըլիկայի տիտղոսով

Գերմանիոյ ախոյեան Պայէրն Միւնիխ այսօր ոչ մէկ ճիգ պիտի խնայէ տուպլէ մը իրագործելու համար, երբ Գերմանիոյ ֆուտբոլի բաժակի մրցաշարքին աւարտականին ճակատի Քայլերայաւութիւնին դէմ:

2002-2003 եղանակին սկիզբը Պայէրնի մարզիչ Օթմար Հիցֆէլտի կազմին միացած Միքայէլ Պալաք մրցումին նախօրեակին կ'ըսէ, թէ ոչ մէկ ճիգ պիտի խնայէ իր նախկին կազմին Քայլերայաւութիւնին դէմ յաղթանակ մը արձանագրելու համար: Պայէրն ցարդ այս բաժակը բարձրացուցած է տասը անգամ, մինչ Քայլերայաւութիւնը՝ երկու անգամ:

Քայլերայաւութիւնի մարզիչ պելճիքացի Էրիք Կերթթի կազմը, որ արդէն իսկ յառաջիկայ եղանակին համար ապահոված է Ես. Է. Էֆ. Ա.ին իր տոմսը, պիտի փորձէ անպայման Ոլիմպիականի դաշտին վրայ պարտութեան մատնել Պայէրնը, թէև անցեալ Մայիս 4ին, անոր կազմը 1-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց Պայէրնէն (Պունտըլիկա):

Ան պիտի փորձէ օգտուիլ Պայէրն Միւնիխի ունեցած բացականերէն: Ախոյեան խումբէն պիտի բացակային՝ Հասան Մալիխամիժէ, Ալեքսանար Յիլըրը, Ռոքէ Սանթա Բուու, Ռուպէրտ-Վալք եւ շատ հաւանաբար Քլաուտիօ Փիպարօ (բոլորն այլ վիրաւոր):

ՊՈՒՇԻ ԿԱՐԾԻՔՈՎ՝ ԻՐԱՆ ԸՆԹԱՅՔ ՊԻՏԻ ՏԱՅ «ԲԱՅԻՏԱ»Ի ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՌԱՋԱՐԿԻՆ, ՄԻՆՉ ՈԱՖՏԱՆՃԱՆԻ ՍՈՒՐ ԵԼՈՅԹ ՍԸ ԿՈՒՆԵՆԱՐ

Միացեալ Նահանգներու նախագահ ձորճ Պուշ Երէկ սփռուած հարցազրոյցի մը մէջ յայտնած է, թէ իր կարծիքով Իրան ընթացք պիտի տայ երկրին մէջ գտնուող «Քայիտա»ի անդամները ձերբակալելու ամերիկեան առաջարկին: Ամերիկացի պաշտօնատարներ ըսած են, թէ եգիպտացի Մայք Ստէյ, որ «Քայիտա»ի թիւերէն է, Իրան կը գտնուի եւ մասնակցած է Ռիատի Մայիս 12ի անձնասպանական գործողութիւններուն ծրագրումին:

Մակայն Իրան Հինգշաբթի օր ըսած էր, թէ տեղեկ չէ, թէ երկրին մէջ ձերբակալուած «Քայիտա»ի անդամներուն շարքի մէջ է Ստէյ, կամ ոչ: Արտաքին գործոց նախարար Քամալ Խարապի երէկ յայտնած է, որ «Քայիտա»ի արգելափակեալ անդամները Մայիս 12ի գործողութիւններէն առաջ ձերբակալուած են, հետեւաբար անոնք չեն կրցած անոնց ծրագրումին մասնակցել:

ԻՐԱԿԻ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄ...

Շարունակուած Ա. Էջէն
տեղեկագիրներէն, որոնք կը հաստատեն, թէ Իրաք խախտած էր ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի բանաձեւերը:

Բրիտանիա եւ Միացեալ Նահանգներ կը քննադատուին, որովհետեւ ցարդ իրենց ամբաստանութիւնները հաստատող որեւէ շօշափելի փաստ չէ գտնուած: Ռամաֆելտ Հինգշաբթի օր ըսաւ, որ վէնքերը պիտի գտնուին, սակայն այդ աշխատանքը ժամանակի կը կարօտի:

Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլէր եւս, որ կը քննադատուի Իրաքի վէնքերուն մասին չափազանցուած տեղեկութիւններ հրապարակելու յանցանքով, անիմաստ որակեց այդ ամբաստանութիւնները, պնդելով, որ Սատամ Հիւսէյն ունէր այդ վէնքերը, որոնք անպայման պիտի յայտնաբերուին: Պլէր անելոց, որ դաշնակից ուժերուն համար առաջնահերթութիւն վայելող առաջին հարցը Սատամի տապալումն էր, իսկ երկրորդը՝ Իրաքի վերաշինութիւնը: Պլէր անուղղակի կերպով ըսել կ'ուզէր, որ հաւաքական քանդումի վէնքերը այս հանգրուանին նախապատուութիւն չեն վայելեր: Պատերապմէն առաջ սակայն, Պաղտատի դէմ պիտուորական գործողութեան մը ձեռնարկելու գլխաւոր պատճառը Սատամի հաւաքական վէնքերու պահեստի գոյութիւնն էր:

Կից եղած ըլլալ: Իսկ նախկին նախագահ Հաշեմի Ռաֆսանձանի երէկ զգուշացուցած է, թէ Իրան «ոեւէ յարձակողի ձեռքը պիտի կտրէ», դիտել տալով, որ իր երկիրը դիւրաւ չի վնասուիր: Ան կը խօսէր Ռըքաթ օրուան աղօթքին ընթացքին, ուր հաւատացեալներ «անկցի Ամերիկան» բացագանչած են:

Ռաֆսանձանի զգուշացուցած է, թէ ամերիկացիք պիտի ձախողին որեւէ արշաւի մէջ, որ իսլամական վարչակարգը իբրեւ «տկար» կը ներկայացնէ:

ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ԸՆԹՐՈՒՍԸ

Միւս կողմէ, Պաքու երէկ հերքած է ռուսական թերթի մը այն տեղեկագիրը, թէ Մ. Նահանգներ համաձայնութիւն մը գոյացուցած են Ազրպէյճանի հետ, ուրկէ կը ծրագրեն Իրանի դէմ պիտուորական գործողութեան ձեռնարկել:

Արտաքին գործոց նախարար Վիլայէթ Կուլիբե «անհիմն» նկատած է այդ տեղեկագիրը, յայտնելով, որ Ազրպէյճան սերտօրէն կը գործակցի Մ. Նահանգներու հետ, սակայն իր հողերուն վրայ ամերիկեան ուժերու հաստատումը այդ գործակցութեան մաս չի կազմեր:

Ռուսական «Նեպուխիմայա Կապէթա» օրաթերթը Հինգշաբթի օր հաղորդած էր, թէ Փենթաղոն Իրանի դէմ պիտուորական գործողութեան ծրագիր մը պատրաստած է եւ թէ այդ ծիրէն ներս անիկա Ազրպէյճանի եւ Վրաստանի մէջ ամերիկեան ուժերու հաստատումը կ'առաջադրէ:

Ռուսիոյ պաշտպանութեան նախարար Սերգէյ Իվանով մինչ այդ երէկ յայտնած է, թէ Մոսկուայի կարծիքով Մ. Նահանգներ Իրանի վրայ յարձակումի պիտի չձեռնարկեն:

«Չեմ կարծեր, թէ Իրաքի սենարիոյն կրկնութիւնը կարելի է», ըսած է ան իր չին պաշտօնակիցին՝ Չաօ Կանկչուանի հետ Մոսկուայի մէջ տեսակցութենէ մը ետք:

Ան նաեւ դարձեալ շեշտած է, թէ Իրանի հետ Մոսկուայի կորիզային մարզի գործակցութիւնը «պոտն քաղաքային բնոյթ» ունի:

Իսկ կորիզային ուժանիթի նախարար Ալեքսանտր Ռուսմանցի երէկ ըսած է, որ Ռուսիա Մ. Նահանգները հրաւիրած է մասնակցելու Իրանի Պուշէհրի կորիզային ուժանիթի կայանին կառուցման եւ թէ Ուաշինկթըն ներկայիս կը քննարկէ հարցը:

Ս. ՓԵԹԵՐՍՊՈՒՐԿԻ ՄԷՋ

ՓՈՒԹԻՆ ԿՈՒՆԵՆԱՅ ԲԱԶՄԱԹԻԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐԲԵՐ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ՀԵՏ

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին երէկ ընթացքի մէջ դրաւ Ս. Փետրսպուրկի մէջ ծրագրուած վեհաժողովներու մարտնչուն մը, ձափոնի վարչապետ ձունիչիւր Քոյլումիի յայտնելով, թէ Մոսկուայի եւ Թուրքիոյ միջեւ սառն յարաբերութեանց ժամանակաշրջանը վերջ գտած է:

Կայսերական նախկին մայրաքաղաքին մէջ մթնոլորտը ընդհանրապէս տօնական էր, մինչ Փութին, որուն ծննդավայրն է քաղաքը, միջազգային լուսարձակները կը գրաւէր՝ Ռուսիոյ մեկուսացումին վերջ տալու նպատակով, Ս. Փետրսպուրկի 300րդ տարեդարձին տօնախմբութիւններուն ընթացքին:

Տեսակցութիւնները նաեւ անպաշտօն նախաբան մը պիտի ըլլան ամենէն աւելի ճարտարարուեստականացած Ռոբերտ Խմբակիի Էվիանի (Յրանսա) վեհաժողովին, որ Յունիս Ին պիտի սկսի:

Ռուսիոյ եւ ձափոնի միջեւ յարաբերութիւնները տասնամեակներէ ի վեր յարուած են Քուրիլեան կղզիներու սեփականութեան գծով բանավէճի մը պատճառով:

Կղզիները ձափոնէն գրաւուած են խորհրդային բանակներուն կողմէ՝ Բ. Աշխարհամարտի վերջին օրերուն:

Պատերապմէն ետք երկու երկիրները պինդուր մը կնքած են, սակայն պաշտօնապէս խաղաղութեան համաձայնագիր չեն ստորագրած, իսկ Ռուսիոյ մէջ ձափոնական ներդրումը նուազագոյն է բանավէճին պատճառով: Քոյլումի - Փութին վեհաժողովը եռօրեայ վեհաժողովներու առաջինն էր: Փութին երէկ նաեւ հիւրընկալած է նախկին խորհրդային 12 հանրապետութիւններու ղեկավարները:

Կրեմլինի ղեկավարը այսօր տեսակցութիւններ պիտի ունենայ Եւրոպական Միութեան ղեկավարներուն հետ, օր մը ետք նախագահ ձորճ Պուշը ողջունելէ առաջ:

ԻՍՐԱՅԷԼ ՊԻՏԻ ՍԿՍԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

ՇԱՄԱ ԿԸ ՄՊԱՆԱՅ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆՐՈՒՆԱԿԵԼ

Համա իսլամական շարժումը երէկ վերահաստատեց, թէ Իսրայէլի դէմ յարձակումները պիտի շարունակուին, եթէ իրեական պետութիւնը մերժէ շօշափելի պիջումներ կատարել:

Պատերապմէն ետք երկու երկիրները յաւելեալ ճնշումի կ'ենթարկէ Մահմուտ Ապպար, որ երկու օր առաջ խոստացած էր, որ յառաջիկայ շաբթուան մէջ պիտի յաջողի պինդուրի խոստում մը ապահովել Համասէն:

Համասի ղեկավար Ապտէլյաչիյ Ռանթիսի ըսաւ, որ ամէն ինչ գին ունի: Ան անելոց, որ երբ Իսրայէլ կը պահանջէ դադարեցնել իրեն դէմ յարձակումները, ինք իր կարգին պետք է վերջ տայ պաղեստինեան շրջաններուն դէմ ամէն ձեռք յարձակումի, կամ պատժամիջոցի:


Ռանթիսի մեծ կարեւորութիւն չտուաւ Ապպար - Շարուն հանդիպումին, դիտել տալով որ անիկա ուրացում է պաղեստինցի ժողովուրդին իրաւունքներուն: Հանդիպումը «անիմաստ» որակուեցաւ նաեւ Իսլամական Ժիհադի կողմէ:

ՊԱՂԵՍՏԻՆՅԻ ԿԻՆԵԱԿ ՄԸ, որ կը փորձէր Կապպէն Իսրայէլ մտնել անձնասպանական գործողութեան մը համար, սպանուեցաւ երբ իսրայէլացի պիտուորներու արձակած փամփուշտներուն պատճառով պայթեցան մարմինին վրայ գտնուող ռումբերը: Չինեալը Է.Ֆ. ՏԷ. ԷԼ. ՓԷ.ի հետեւորդ էր:

ՍԻՐԱՅԷԼԵԱՆ հարցախոյզի մը համաձայն, իսրայէլացիներուն 57 առ հարիւրը համաձայն է պաղեստինեան անկախ պետութեան մը հաստատման, մինչ 38 առ հարիւրը դէմ է:


ԱՐԺԱՆԱԻՐԱՊԵՍ ՆՇՈՒԵՑԱԻ ԸՆՅԱՍՏԱՆԻ Ա. ԸԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն



Գեղամ եպս. Խաչերեան

Թիւրքի: Իր խօսքին արարտին, ընկ. Գանտահարեան ըսաւ. «Մայիս 28ով խորհրդրդանշող մեր լինելութեան գաղափարախօ-



Վարդան եպս. Ազգարեան

28ը, որուն շնորհիւ է, որ հայ ժողովուրդը վերստին փոխակերպուեցաւ անշէջ կրահող տօսն է Մայիս



Շահան Գանտահարեան

ըսաւ սրբապաշտը: Գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր, որուն ընթացքին էլոյթ ունեցաւ ղաշնակա հարուիի Սիրվարդ Պոյաճեան: Հանդիսութիւնը փակուեցաւ «Մարդաբար» յաղթերգով:



Յակոբ Հանտեան

ժընթացին ետ քայլ շարժանագրելու անհրաժեշտութիւնը: Ան այս բոլորը դիմագրաւելու նախապայմանը նկատեց ներքին միասնակամութիւնը եւ ազգային հիմնախնդիրներու նկատմամբ Մփիւռքի քաղաքական հատուածներու միացեալ ու համակարգուած գործունէնու-



FUEL CARDը գործածեցէք

Պենզինի գնման, ինչպէս նաեւ ձեր ինքնաշարժներուն իւղը փոխելու կամ զանոնք լուալու պարագային: Երբ մագուր պիտի գնէք, գործածեցէք FUEL CARDը՝ հեռաձայնելով 04 / 715111 - 222 - 333 թիւերուն:

- ▶ MANAR - Տորա
- ▶ ՍՍՐԳԻՍԵԱՆ - Պուրճ Չամուտ
- ▶ BASSIL - Տորա, կամուրջի մօտ
- ▶ AKEL եւ BASSIL - Տորա, «Քրետի Լիպանգ»ի մօտ
- ▶ SPEED - Չամբաշ, Կալէրի Իթքիհատ
- ▶ ՉԱՅԿԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ - «Ալմագա»
- ▶ MALLAH - Անթիլիաս, կաթողիկոսարանի դիմաց
- ▶ MALLAH - Չարթ Դաուարնէ
- ▶ MALLAH - Պապիմ
- ▶ MALLAH - Ժալ էլ Տիպի մայրուղի
- ▶ CORAL - Էշրեֆիէ, Ս. Յակոբ Եկեղեցւոյ մօտ
- ▶ SAAD - Մար Միայել
- ▶ SPEED - Նաիր, «Փեօօ» ընկերութեան մօտ
- ▶ PHOENICIA - Այնճարի մուտքին
- ▶ MALLAH - Պապատթ